

Եւ կը լինէին շարժական կամ հաստատուն (Գար. Ա, 1269 — 80): Քառակուսոյն օրինակն ես ինքս տեսայ նշանաւոր Պոմպէի քաղաքին աւերակաց մէջ՝ 1907ի այցելութեանս: Կիսաբոլոր ձեւեր դեռ կը պահէին Բիւզանդացիք. «զբազմականն որ կակողանկողնեօք յօրինեալ շուրջանակի ալումքն բոլորակ կարակնեալ», կ'ըսէ Ոսկերբերան (Թղթ. Ա, 530): Իսկ մեր քով: Յիշուած կը գտնենք թէ միաւորը, եւ թէ բազմաւորը: Առաջինը՝ երբ կը խօսուի Պարսից վրայ. զոր օրինակ՝ Յազկերտ «զիւրաքանչիւր տեղիս շնորհէր նոցա ըզբազմականիս» (Եղիշ. 17): Եւ Նիւշապհոյ մոգպետին սեղանին շուրջ կ'ըսուի «ունել զգլուխ բազմականիս» կամ «զիւրաքանչիւր տեղի բազմականից», կամ «ի գլուխ բազմականիս մերոյ» (նոյն, 132-3). ուր բազմականը միշտ եզակի է թուով: Բայց նոյն տեղ կ'ըսէ նաեւ «ի բազմականացն անդ» (134). զոր եթէ հեղինակին կամ զբնագ անուշադրութեան արդիւնք կարծենք, Պարսից բազմականը միապաղաղ պիտի համարինք: Իսկ ուր կը խօսուի հայ տաճարաց մասին, նստարանք միշտ յոգնակի են. ինչպէս «բազմակարացն կարգելոց» (Փաւս. 67), կամ «ի բազմականացն», որոցմէ իւրաքանչիւր կոչնական